ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահի
12-08-2025 թ-ի թիվ 88 -Լ կարգադրությամբ

ԿԱՆՈՆՆԵՐ
«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28/08/2025
Այլ դրույթներ	Սույն կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում 14.07.2023թ.-ի N 97-Լ կարգադրությամբ հաստատված ««ԱյԴի Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային հաշիվների բացման և սպասարկման» կանոնները
Առնչվող փաստաթղթեր	Հաշիվների բացման, սպասարկման և փակման ընթացակարգ ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 102-ն որոշում «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու մասին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ 3

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ 4

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ 5

ԳԼՈՒԽ 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7

ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 8

ԳԼՈՒԽ 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) 9

ԳԼՈՒԽ 9. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ 9

ԳԼՈՒԽ 10. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 10

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն փաստաթղթի նպատակն է սահմանել Բանկի կողմից Բանկային հաշվի բացման, վարման, սպասարկման, դրամական միջոցների պահպանման և սույն կանոններով նախատեսված հաշվարկային գործառնությունների կազմակերպման և իրականացման պայմանները:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն կանոններում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Բանկ***՝ «Այդի բանկ» ՓԲԸ,
2) ***Բանկային հաշիվ***՝ ընթացիկ և/կամ խնայողական հաշիվ/հաշիվներ,
3) ***Հաճախորդ***՝ ֆիզիկական անձ, ով Բանկի հետ կնքել է Բանկային հաշվի բացման և սպասարկման համար գրավոր պայմանագիր,
4) ***Օֆերտա***՝ Ֆիզիկական անձի կողմից Բանկ ներկայացվող Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում-հայտ,
5) ***Ակցեպտ***՝ Ֆիզիկական անձի կողմից Բանկ ներկայացված Օֆերտայի՝ Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում-հայտի ընդունումը հավաստող փաստաթուղթ,
6) ***Պայմանագիր***՝Հաճախորդի կողմից ներկայացված Օֆերտան և Ակցեպտը միասին, ինչպես նաև Հաճախորդի հետ Բանկի կնքած Բանկային հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը և/կամ համաձայնագիրը,
7) ***Բանկի սակագներ (Տեղեկատվական ամփոփագիր)***՝ Բանկի ներքին իրավական ակտերով ֆիզիկական անձ հաճախորդների համար հաստատված սակագներ/տեղեկատվական ամփոփագրեր:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Բանկը Հաճախորդի հանձնարարությամբ՝ համապատասխան Օֆերտայի հիման վրա Հաճախորդի համար բացում է Բանկային հաշիվ և պարտավորվում է այդ Բանկային հաշիվը վարել, սպասարկել, մուտքագրվող դրամական միջոցները պահել և հաշվարկային գործառնություններն իրականացնել համաձայն սույն կանոնների դրույթների, իսկ Հաճախորդը պարտավորվում է պահպանել սույն կանոնների դրույթները և իրականացնել բոլոր գործողությունները, որոնք ուղղված են սույն կանոնների կատարմանը, այդ թվում՝ ներկայացնել Բանկային հաշվի բացման և սույն կանոնների համաձայն դրա/դրանց սպասարկման համար անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը:

4. Բանկը՝ Հաճախորդի Բանկային հաշիվը բացում է Հաճախորդի կողմից պատշաճ կարգով և ամբողջական լրացված Օֆերտան (Բանկի կողմից սահմանված ձևով) և անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ Բանկ ներկայացնելու դեպքում՝ մեկ բանկային օրվա ընթացքում:

5. Բանկն իրավունք ունի «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության

մասին» ՀՀ օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ Հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով չընդունել ոչ ռեզիդենտ Հաճախորդի հաշվից գումարների ելքագրման հանձնարարականներ մինչև 6 (**վեց)** ամիս ժամկետով, բացառությամբ Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ձեռքբերման և Բանկում ավանդ ներդնելու նպատակով, ինչպես նաև Բանկում իր այլ հաշվին փոխանցումների նպատակով կատարվող ելքագրումների:

6. Բանկը Հաճախորդի Բանկային հաշիվ բացելը հավաստում է Ակցեպտի միջոցով, որը հաճախորդին տրամադրվում է առձեռն կամ Հաճախորդի՝ Օֆերտայում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով կամ երկկողմանի Պայմանագրի ստորագրմամբ:

7. Հաճախորդը սույնով գիտակցում և ընդունում է, որ իր անունից կամ իր տվյալների տրամադրմամբ այլ անձանց իր անունից կամ իր փոխարեն կամ իր հաշիվներով գործարք կատարելու հնարավորության ընձեռումը (այդ թվում հաշվի համալրման հնարավորության տրամադրումը) համարվում է բանկային գաղտնիք կազմող տեղեկություններին տվյալ անձին ծանոթանալու համաձայնության տրամադրում:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8. Բանկը հաճախորդի Բանկային հաշվով գործառնություններն իրականացնում է վերջինիս համապատասխան հանձնարարականների հիման վրա, հաշվին առկա մնացորդի սահմաններում, եթե ՀՀ օրենսդրությամբ, այլ պայմանագրերով և/կամ համաձայնագրերով այլ բան սահմանված չէ:

9. Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի դրամական կամ արտարժութային միջոցների օգտագործման ուղղությունների համար և չի միջամտում Բանկային հաշվում առկա միջոցների տնօրինմանը, եթե ՀՀ օրենսդրությամբ, այլ պայմանագրերով և/կամ համաձայնագրերով այլ բան սահմանված չէ:

10. Բանկը պատասխատատվություն չի կրում Հաճախորդների հաշվին կանխիկ արտարժույթի մուտքագրման գործարքները «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքներով նախատեսված պահանջներին համապատասխանելու համար:

11. Բանկի կողմից Հաճախորդի հետ կնքված Պայմանագրի, սույն կանոնների և Բանկի կողմից հաստատված Բանկի սակագների համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց Բանկը Հաճախորդի Բանկային հաշվից անակցեպտ գանձում է միջնորդավճարներ կամ այլ վճարներ, ինչի համար Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը՝ Բանկի հետ կնքելով Հաշվի բացման և սպասարկման պայմանագիր:

Հաճախորդը, Բանկի հետ կնքելով Հաշվի բացման և սպասարկման պայմանագիր, տալիս է իր համաձայնությունը նաև՝ Հաճախորդի Բանկային հաշվից անակցեպտ գանձել Բանկի կողմից, սակայն Հաճախորդի անունից և վերջինի հանձնարարության հիման վրա կնքվող պայմանագրերից բխող վճարման ենթակա գումարները:

12. Հաճախորդի Բանկային հաշվով անկանխիկ գործարքներն իրականացվում են՝ համաձայն ստորև նշվածի.

1) ֆիզիկական անձի փաստացի ներկայությամբ՝ անձը հաստատող փաստաթղթով նույնականացվելուց հետո, ընդ որում՝ մինչև 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ)

ներառյալ գործարքների դեպքում կարող է չպահանջվել անձը հաստատող փաստաթուղթ, եթե Բանկում առկա է հաճախորդի անձը հաստատող փաստաթղթի բնօրինակի լուսապատճենը և գործարքը հիմնավորող փաստաթղթում Հաճախորդի ստորագրությունը համընկնում է Հաճախորդի անձը հաստատող փաստաթղթում առկա ստորագրության հետ, 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամը (համարժեք արտարժույթ) գերազանցող գործարքների դեպքում Հաճախորդը պարտադիր պետք է ներկայացնի անձը հաստատող փաստաթուղթ: Նշված գումարային սահմանափակումը կարող է փոփոխվել Բանկի կողմից միակողմանի:

2) Առցանց հարթակներով կամ դրանց հաղորդագրությունների միջոցով ստացված հանձնարարականներով: Ընդ որում, գործարքը կարող է չիրականացվել՝ առանց Բանկի կողմից Հաճախորդի հետ լրացուցիչ ճշգրտման և Հաճախորդի կողմից հաստատում ստանալու:

13. Հաճախորդը տեղեկացված է, գիտակցում և ընդունում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ Բանկն իրավունք ունի հաշվով իրականացվող գործառնությունների (փոխանցումներ և այլն) իրականացման համար Հաճախորդից պահանջել տվյալ գործարքին վերաբերող և Բանկին անհրաժեշտ փաստաթղթեր և (կամ) բացատրություններ, ինչպես նաև մինչև դրանց ստացումը կասեցնել կամ մերժել Բանկային հաշվի սպասարկումը: Հաճախորդն ընդունում է, որ նման դեպքը չի կարող համարվել Պայմանագրի կամ ՀՀ օրենսդրության խախտում, եթե նման փաստաթղթերի պահանջը ներկայացվել է Հաճախորդի կողմից անհրաժեշտ գործառույթի իրականացման հանձնարարականի ստացումից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

14. Սույն կանոնների 13-րդ կետով նախատեսված դեպքերում՝ Բանկի կողմից պահանջվող փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում տվյալ գործարքի կատարումը դադարեցվում է և կարող է կատարվել նոր վճարման հանձնարարականի հիման վրա, իսկ էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացված վճարման հանձնարարականը հեռացվում է համակարգից և գործարքի կատարման համար Հաճախորդը պետք է մուտքագրի նոր հանձնարարական:

15. Հաճախորդը կարող է տնօրինել իր հաշվին առկա միջոցները սույն կանոններով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների սահմաններում՝ հաշվի առնելով սույն կանոններով նախատեսված և/կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառված սահմանափակումները:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳ

16. Բանկը չի կատարում Հաճախորդի հանձնարարականը, եթե այն թերի է լրացված, նրանում առկա են սխալներ, ջնջումներ, հաշվում առկա միջոցները չեն բավարարում փոխանցումը կատարելու համար, ինչպես նաև, եթե բացակայում է սույն կանոններով նախատեսված անհրաժեշտ պայմաններից որևէ մեկը:

17. Հաճախորդի որևէ հաշվից միջոցների դուրսգրումը կատարվում է ոչ ուշ, քան Հաճախորդի կողմից համապատասխան վճարման հանձնարարականը Բանկ ներկայացնելու հաջորդ բանկային օրը: Ընդ որում, Հաճախորդի կողմից մինչև ժամը 15:30 ներկայացված վճարման հանձնարարականները համարվում են Բանկ ներկայացված տվյալ բանկային օրը, իսկ ժամը 15:30-ից հետո ներկայացված վճարման հանձնարարականները համարվում են Բանկ ներկայացված հաջորդ բանկային օրը:

18. Բանկը հանձնարարականը չկատարելու մասին Հաճախորդին պետք է տեղեկացնի ոչ ուշ, քան հանձնարարականի ներկայացմանը/ստացմանը հաջորդող բանկային օրը՝ նշելով չկատարման

պատճառները:

19. Հաճախորդի որևէ հաշվին ուղղված միջոցները մուտքագրվում են Հաճախորդի հաշվին ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ բանկային օրը:

20. Յուրաքանչյուր օրվա գործարքների վերաբերյալ Բանկը Հաճախորդի պահանջով վերջինիս կտրամադրի Բանկային հաշվի քաղվածք, որը համարվում է հաստատված, եթե Հաճախորդը, ստանալով քաղվածքը, վերջինիս հետ կապված դիտողությունները գրավոր ձևով չի ներկայացրել Բանկին՝ քաղվածքի տրամադրման/ուղարկման օրվանից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

21. Հաճախորդը պարտավորվում է իր որևէ հաշվին սխալմամբ հաշվեգրված կամ իրեն չհասցեագրված գումարները վերադարձնել ոչ ուշ, քան այդ միջոցների հաշվեգրման հաջորդ բանկային օրը: Սույն պարտավորությունը չկատարելու դեպքում՝ Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով գանձելու Հաճախորդին չհասցեագրված գումարները: Տեխնիկական պատճառներով հաշվին սխալ մուտքագրված գումարները Բանկն իրավունք ունի անակցեպտ կարգով գանձել հաշվից՝ փոխանցման սխալն ուղղելու նպատակով:

22. Հաճախորդի հանձնարարականների հետ կապված բոլոր ծախսերը Բանկը կատարում է անակցեպտ կարգով՝ Հաճախորդի ցանկացած հաշվից գումար գանձելու միջոցով կամ Հաճախորդը դրանք վճարում է կանխիկ եղանակով: Ընդունելով սույն կանոններով՝ Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը և հանձնարարում Բանկին իրականացնել սույն կետով նախատեսված անակցեպտ կարգով գումարների գանձման գործառնությունը:

23. Բանկը Հաճախորդի հաշվի մնացորդի դիմաց կարող է վճարել տոկոսներ համապատասխան հաշվի տեսակի համար Բանկի սակագներով սահմանված տոկոսադրույքի չափով:

24. Բանկի կողմից կարող են միակողմանիորեն փոփոխվել Հաճախորդի հաշվի սպասարկման հետ կապված Բանկի կողմից սահմանված սակագները և սույն կանոնները: Ընդ որում սույն կետով նախատեսված սակագներն ու անհրաժեշտ այլ վճարների մեծությունները սահմանվում են Բանկի համապատասխան տեղեկատվական ամփոփագրերով, որոնք հասանելի են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում՝ www.idbank.am հասցեում: Սույն կետով նախատեսված սակագների և այլ անհրաժեշտ վճարների մեծությունների, ինչպես նաև սույն կանոններում փոփոխությունները համարվում են ուժի մեջ մտած Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուց և հաճախորդին իր կողմից նշված եղանակով ծանուցելուց 15 (տասնհինգ) օր հետո՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման հանգեցնելու դեպքում, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրվելուց և հաճախորդին իր կողմից նշված եղանակով ծանուցելուց 7 աշխատանքային օր հետո:

25. Բանկի պահանջի դեպքում՝ Հաճախորդի կողմից պետք է լրացվի Հայտարարություն՝ գործարքի իրական շահառուի, ինչպես նաև իր հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Բանկը պարտավորվում է՝

1) Հաճախորդի անունով բացել համապատասխան Բանկային հաշիվ՝ սույն կանոններով սահմանված ժամկետում՝ նախատեսված փաստաթղթերի ամբողջական ներկայացման դեպքում:

2) Հաճախորդի Բանկային հաշվով գործառնություններն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոններով սահմանված կարգով՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:

3) ապահովել Հաճախորդի Բանկային հաշվով իրականացվող գործառնությունների գաղտնիությունը:

4) Բանկային հաշվի մասին տեղեկություններ տրամադրել Հաճախորդի և նրա կողմից լիազորված անձին, անհրաժեշտության դեպքում նաև այլ անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5) ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոններով սահմանված լիազորությունների շրջանակներում անվերապահորեն, ժամանակին և ճշգրիտ կատարել Հաճախորդի կողմից տրված վճարման հանձնարարականները:

6) Հաճախորդի Բանկային հաշվում միջոցների անբավարարության դեպքում դրամական միջոցները դուրս գրել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաջորդականությամբ և հերթականությամբ:

7) Հաճախորդի հաշվից առանց Հաճախորդի հանձնարարության անվիճելի կարգով գումարներ դուրս գրել միայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

8) այն ծառայությունները, որոնք անմիջականորեն չեն վերաբերվում հաշվարկադրամարկղային սպասարկմանը (վարկավորում, ֆակտորինգ, լիզինգ, արժեթղթերի գնում, տեղաբաշխում և նմանատիպ գործառնություններ), իրականացնել Հաճախորդի հետ առանձին Պայմանագրերի հիման վրա:

9) Հաշվարկադրամարկղային սպասարկումը կատարել ըստ Բանկի սակագների կամ Պայմանագրային հիմունքներով:

27. Հաճախորդը պարտավորվում է՝

1) Բանկ ներկայացնել Բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև պատշաճ կարգով և ամբողջական լրացված դիմում (Բանկի կողմից սահմանված ձևով):

2) վճարահաշվարկային փաստաթղթերը ներկայացնել Բանկ՝ լրացված համապատասխան ձևով:

3) վճարել Բանկի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց Բանկի սակագներով կամ պայմանագրային հիմունքներով, եթե սույն կանոնների կատարման ընթացքում նման վճարումներ առաջանան:

4) Բանկի հետ գործարար հարաբերության ամբողջ ընթացքում ցանկացած պահին Բանկի հիմնավոր պահանջով վերջինին ներկայացնել պահանջվող ցանկացած փաստաթուղթ և/կամ տեղեկատվություն:

5) օտարերկրյա պետության(ների)/տարածք(ներ)ի հարկային ռեզիդենտ դառնալու/հանդիսանալու դեպքում, ինչպես նաև՝ իր կողմից Բանկին տրամադրված ցանկացած

տեղեկատվության փոփոխության դեպքում, որոնք ազդում են իր հարկային ռեզիդենտության կարգավիճակի վրա կամ առաջացնում են դրա հետ կապված տեղեկությունների անճշտություն, նման փոփոխության հանգամանքների ի հայտ գալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Բանկին տրամադրել համապատասխան վերաբերելի տեղեկատվությունը (այդ թվում՝ ներկայացնելով համապատասխան թարմացված ինքնահայտարարագիր) և իր ֆինանսական հաշիվների մասին տեղեկատվությունը ՀՀ հարկային մարմնին տրամադրելու վերաբերյալ համաձայնություն:

6) Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրության չափանիշներով քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսանալու դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել Բանկին՝ ներկայացնելով համապատասխան տեղեկատվություն, Բանկի պահանջով տրամադրել համապատասխան լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր:

7) Բանկին տրամադրել բոլոր լիազոր անձանց լիազորագրերի բնօրինակները, ովքեր լիազորված են Բանկում Բանկային հաշվի բացման, սպասարկման և փոխանցումների կատարման, տեղեկատվության, այդ թվում՝ քաղվածքների ստացման համար:

8) իր և իր հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ նախկինում ներկայացված տեղեկատվության փոփոխության դեպքում՝ ներկայացնել թարմացված տեղեկատվություն: Ընդ որում՝ սույն կետով նախատեսված պարտավորության չկատարումը Բանկի կողմից պարզվելու դեպքում՝ սույն կանոններով նախատեսված գործառույթները Բանկի կողմից կարող են չկատարվել՝ մինչև թարմացված տեղեկատվության տրամադրումը:

9) Բանկի պահանջով ներկայացնել սույն կանոնների 13-րդ կետով նախատեսված փաստաթղթերը և (կամ) բացատրությունները:

10) անձնական տվյալների փոփոխության դեպքում տեղեկացնել Բանկին իր և Բանկի միջև կնքված Պայմանագրի համաձայն, ինչպես նաև հավաստել դրանց անփոփոխ լինելը Բանկի կողմից սահմանված եղանակով:

11) ծանոթանալ և Բանկի հետ գործարար հարաբերության ամբողջ ընթացքում առաջնորդվել «Այդի Բանկի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» քաղաքականությամբ (https://idbank.am/information/consumer-rights/contentfooter/AML-CTF-control/):

ԳԼՈՒԽ 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

28. Սույն կանոններով իրենց վերապահված պարտավորությունների չկատարման (ոչ պատշաճ կատարման) դեպքում՝ համապատասխանաբար Բանկը կամ Հաճախորդը կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրության համապատասխան:

29. Հաճախորդը պատասխանատվություն է կրում Բանկին տրամադրված տեղեկատվության իսկության և ամբողջականության, ինչպես նաև՝ սույն Կանոնների 27-րդ կետի 4-5-րդ ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը և/կամ համաձայնությունը և/կամ ինքնահայտարարագիրը ստորագրելուց/ներկայացնելուց հրաժարվելու, ինչպես նաև Բանկին թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն ներկայացնելու հետևանքով առաջացած բացասական հետևանքների, այդ թվում՝ Բանկին պատճառված վնասի համար:

30. Բանկը պատասխանատու չէ Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերում, լրացված դիմումներում, ինչպես նաև վճարման հանձնարարականներում նշված տեղեկությունների հավաստիության համար:

ԳԼՈՒԽ 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

31. Սույն կանոններով սահմանված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար՝ թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Բանկային հաշվի բացման և սպասարկման դիմում-հայտի ընդունումից (ակցեպտ) հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն կանոններով սահմանված պարտավորությունների կատարումը:

ԳԼՈՒԽ 9. ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

32. Սույն կանոններով նախատեսված պայմանների իրականացման նպատակով՝ թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավորվում են իրենց գործունեության ընթացքում խստորեն համապատասխանել բոլոր այն կիրառելի կանոնակարգերին, որոնք արգելում են հանրային կամ մասնավոր գործիչների շրջանում կոռուպցիան, փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը:

33. Բանկը և Հաճախորդը հավաստում են, որ տեղյակ են այն մասին, որ ՀՀ օրենսդրությունը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններն արգելում են փողերի լվացումը կամ դրան աջակցելը, ահաբեկչության հետ կապ ունեցող անհատների և կազմակերպությունների հետ գործարքները և ֆինանսական միջոցների ու աջակցության տրամադրումը:

34. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը պարտավորվում են ձեռնարկել և իրականացնել անհրաժեշտ և ողջամիտ քայլեր ու միջոցներ կոռուպցիան, փողերի լվացումը, ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու և կանխելու համար:

35. Բանկը և Հաճախորդը հայտարարում են, որ ըստ իրենց ունեցած տեղեկությունների՝ իրենց օրինական ներկայացուցիչները, գործակալները և ցանկացած այլ անձինք, ովքեր ներգրավված են սույն պայմանագրային հարաբերությունների իրականացմանը կամ որևէ ձևով ազդում են որոշումների կայացման վրա, ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն առաջարկում, չեն տալիս, չեն համաձայնում տալ դրամական միջոցներ կամ համանման արժեք, որպես հավելավճար կամ նվեր, որևէ անձի կամ ընկերության, այդ թվում, Կառավարության որևէ ներկայացուցչի կամ աշխատակցի, քաղաքական կուսակցության որևէ ներկայացուցչի, քաղաքական մանդատի որևէ թեկնածուի, ինչպես նաև՝ որևէ պետության, գործակալության կամ հասարակական կազմակերպության կամ որևէ միջազգային հասարակական կազմակերպության ներկայացուցչության անունից օրենսդրական, վարչական կամ դատական գործառույթներ կատարող ցանկացած անձի՝ նպատակ ունենալով նրանց կոռումպացնել և/կամ խրախուսել գործելու իրենց

գործառույթներին և գործունեությանը անհամապատասխան, որպեսզի իրենց համար ձեռք բերեն կամ պահպանեն որևէ գործարք կամ առավելություն ստանան առևտրային գործունեության ընթացքում:

36. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը տեղեկացված են, որ իրենց գործունեությունը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին և հավաստում է, որ իրենց հարաբերությունների ընթացքում և դրա արդյունքում շրջակա միջավայրին ոչ թույլատրելի վնաս չի պատճառվի:

37. Սույն կանոններով նախատեսված գործառույթների իրականացման ընթացքում թե Բանկը թե Հաճախորդը պարտավոր են պահպանել բոլոր կիրառվող օրենքներն ու կանոնները, որոնք արգելում են ռասսայական, կրոնական, մաշկի գույնի, ազգային, տարիքային, սեռական կամ հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը:

38. Հաշվի բացման համար էլեկտրոնային փոստի հասցեի առկայությունը պարտադիր է:

ԳԼՈՒԽ 10. ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՄԱՆ, ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

39. Սույն կանոններն ուժի մեջ են մտնում դրանց հաստատման պահից և գործում են Հաճախորդի Բանկային հաշիվը Բանկում սպասարկելու ամբողջ ընթացքում:

40. Հաճախորդի դիմումով ցանկացած ժամանակ բանկային հաշվի սպասարկումը կարող է դադարեցվել՝ պայմանագրային հարաբերությունները լուծվել՝ այդ մասին մեկ բանկային օր առաջ Բանկին տեղեկացնելու և Բանկային հաշվում առկա միջոցները զրոյացնելու դեպքում:

41. Բանկը կարող է դադարեցնել Հաշվի սպասարկումը և լուծել Հաճախորդի հետ ունեցած պայմանագրային իրավահարաբերությունները.

1) եթե 1 (մեկ) օրացուցային տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնություններ չեն կատարվել,

2) եթե հերթական վճարման օրվա դրությամբ հաշվին առկա միջոցները բավարար չեն հաշվի սպասարկման սակագինը գանձելու համար,

3) եթե Հաճախորդի կողմից խախտվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով սահմանված սահմանափակումները՝ համաձայն Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ կամ կատարվել է նման խախտման փորձ կամ բանկի մոտ կասկածներ կան Հաճախորդի կողմից իրականացվող կամ նախատեսված գործարքների վերաբերյալ և Հաճախորդը Բանկի պահանջով չի ներկայացնում բավարար ապացույցներ նման կասկածները բացառելու համար:

4) եթե Հաճախորդը չի ներկայացնում Բանկի կողմից պահանջված փաստաթղթերը/տեղեկատվությունը, այդ թվում՝ որոշակի գործարքին առնչվող կամ այն հավաստող փաստաթղթերը/տեղեկատվությունը,

5) եթե Հաճախորդի կողմից կամ օգտին իրականացվող գործարքներում /ներառյալ ստացվող փոխանցումներ/ օգտագործվել են Հաճախորդի կողմից Բանկին տրամադրված տվյալներից ու տեղեկատվությունից տարբերվող տվյալներ ու տեղեկատվություն:

6) եթե հաճախորդը սոցիալական կայքերում վիրավորական կամ ոչ հարգալից է

արտահայտվել Բանկի բրենդի, մատուցած ծառայությունների, աշխատակիցների, աշխատատեղի կամ Բանկի համբավի հետ կապված այլ թեմաներով՝ կիրառելով անհարիր բառեր, վիրավորանքներ: Ընդ որում՝ սույն չափանիշը երբեք և որևէ պարագայում չի կարող տարածվել այն դեպքերի նկատմամբ, երբ հաճախորդն առանց որևէ վիրավորական և զրպարտչական արտահայտությունների առողջ քննադատության է ենթարկում Բանկը և/կամ Բանկի աշխատանքը:

7) Հաճախորդը վիրավորում կամ ոչ էթիկական վերաբերմունք է ցուցաբերում Բանկի աշխատակիցների կամ Բանկի հանդեպ: Ընդ որում՝ սույն չափանիշը տարածվում է ինչպես Բանկի տարածքում արձանագրված դեպքերին, այնպես էլ Բանկի տարածքից դուրս, օրինակ՝ հեռախոսային խոսակցության ընթացքում և այլն:

8) Բանկի մոտ առկա է հիմնավոր կասկած, որ Բանկի ծառայություններից օգտվելը Հաճախորդի համար ունի բացառապես կամ առավելապես Բանկի ռեսուրսները (մարդկային, ժամանակային, նյութական) ծախսելու/վատնելու, Բանկին նյութական վնաս պատճառելու, իրավունքի չարաշահմամբ անձնական՝ այլ մատուցվող ծառայության բնույթից չբխող օգուտներ քաղելու նպատակ:

9) Հաճախորդի մասնակցությամբ ՀՀ առևտրային բանկերում և/կամ ֆինանսական այլ կազմակերպություններում կատարվել է զեղծարարություն կամ զեղծարարության փորձ:

10) եթե օտարերկրյա պետության(ների)/տարածք(ներ)ի ռեզիդենտ դարձած/հանդիսացող Հաճախորդը հրաժարվում է Բանկին տրամադրել սույն Կանոնների 27-րդ կետի 4-5-րդ ենթակետերով նախատեսված տեղեկատվությունը և/կամ համաձայնությունը, կամ եթե Բանկին ներկայացրել է թերի կամ ոչ ճշգրիտ տեղեկատվություն,

42. Այլ դեպքերում պայմանագրային հարաբերությունները կարող են դադարեցվել Բանկի պահանջով՝ ՀՀ օրենսդրությամբ, հաշվի բացման և սպասարկման պայմանագրով, Բանկի սակագներով սահմանված դեպքերում և կարգով:

43. Սույն կանոնների կատարման հետ կապված կողմերի միջև փոխհարաբերությունները բնութագրվում են միմյանց նկատմամբ ցուցաբերվող հատուկ վստահությամբ, ինչպես անձանց, որոնք ի վիճակի են լավագույնս ապահովել իրենց նպատակի իրականացումը:

44. Հաշվի բացման և սպասարկման հարաբերություններից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական Համակարգի Հաշտարարին, որը Կողմերի միջև ծագած վեճը լուծում է «Ֆինանսական Համակարգի Հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

45. Սույն կանոններից, ինչպես նաև Բանկի և Հաճախորդի միջև հաշվի բացման և սպասարկման կապակցությամբ առկա հարաբերություններից ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Երեսնօրյա ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրության հիման վրա՝ ՀՀ դատական համակարգի միջոցով:Կնքելով Հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը՝ Հաճախորդը տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ սպասարկման պատշաճ ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, իրականացնելու իրենց միջև կատարվող հեռախոսազանգերի ձայնագրություն: Տվյալ ձայնագրությունները ունեն ապացուցողական ուժ և միմյանց

միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

46. Կնքելով Հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը՝ Հաճախորդը տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ Բանկի տարածքում Հաճախորդին սպասարկելիս իրականացնել տեսաձայնագրություններ և ձայնագրումներ: Տվյալ ձայնագրությունները /տեսաձայնագրությունները/ ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց

47. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը հավաստում են, որ հաշվի բացման պահին նրանց հայտնի չեն այնպիսի հանգամանքներ, որոնց հետևանքով իրենք իրավասու կամ ի վիճակի չեն կնքել կամ կատարել սույն կանոնները:

48. Թե՛ Բանկը, թե՛ Հաճախորդը հաստատում են նաև, որ սույն կանոնների կատարումը լիովին համապատասխանում է իրենց շահերին, ինչպես նաև չի վնասում վերջիններիս համբավին:

49. Բանկը, հավատարիմ լինելով իր առաքելությանը, պահպանելով ամենաբարձր էթիկական և կարգավորող չափանիշները՝ պատասխանատու գործունեություն է իրականացնում և երաշխավորում է, որ ո՛չ Բանկը, ո՛չ էլ Բանկի ծառայությունները ուղղակիորեն կամ անուղղակիորեն չեն օժանդակում կիրառելի միջազգային պատժամիջոցների և/կամ սահմանափակումների խախտմանը/շրջանցմանը:

50. Բանկը, լինելով միջազգային ֆինանսական համակարգի պատասխանատու մասնակից, միևնույն ժամանակ առավել բարձր գնահատելով և պաշտպանելով հաճախորդների շահերը, անվտանգությունը և նրանց գործունեության անընդհատությունը՝ հետևում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի, Եվրոպական Միության, Միացյալ Թագավորության, Միացյալ Նահանգների և այլ միջազգային պատժամիջոցներին և/կամ սահմանափակումներին:

51. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ պատժամիջոցների քաղաքականությունը արգելում է հաճախորդների ցանկացած գործունեություն, որը կխախտի կիրառելի պատժամիջոցները և/կամ սահմանափակումները: Նման գործողությունների արդյունքում կմերժվեն փոխանցումների/գործարքների իրականացումը, ինչպես նաև բանկը կարող է հրաժարվել այդ հաճախորդներին սպասարկելուց:

52. Սույն կանոնների նպատակների իրականացման հետ կապված Բանկի և Հաճախորդի միջև բոլոր ծանուցագրերը, հարցումները կամ հաստատումներն ուղարկվում կամ տեղում կազմվում են գրավոր՝ պատշաճ կերպով և ստորագրվում են լիազորված անձանց կողմից:

53. Հաճախորդի հաշվին և դրա սպասարկմանն առնչվող տեղեկությունները հանդիսանում են բանկային գաղտնիք և ենթակա չեն հրապարակման՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

54. Սույն կանոնների դրույթները մեկնաբանվում են դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով մյուս պայմանները, ամբողջական իմաստը և նպատակները, որոնցով առաջնորդվել են Բանկը և Հաճախորդը:

55. Եթե սույն կանոնների որևէ դրույթ ճանաչվում է անվավեր կամ դառնում է անկիրառելի, ապա այն պետք է վերանայվի գործող օրենսդրության շրջանակներում՝ Բանկի և Հաճախորդի մտադրությունները վերականգնելու նպատակով: Սույն կանոնների որևէ դրույթի անվավերությունը կամ անկիրառելիությունը չի ազդում կանոնների որևէ այլ դրույթի վավերականության կամ կիրառելիության վրա: Բանկը և Հաճախորդը

համաձայնվում են չշահարկել սույն կանոնների որևէ դրույթի անգործադրելիությունը՝ կանոններով սահմանված իրենց պարտականությունների կատարումից խուսափելու համար:

56. Հաճախորդը բանկային հաշիվ բացելու համար Բանկին պատշաճ կարգով, ամբողջական լրացված և ստորագված օֆերտա ներկայացնելով՝ տալիս է իր անվերապահ համաձայնությունը Բանկի պաշտոնական կայքում՝ «Հաճախորդի իրավունքներ» բաժնում, և/կամ Մոբայլ Բենկինգում՝ Հաճախորդի անձնական օգահաշվի/հաշվառման հաշվի «Կարգավորումներ» բաժնի «Պայմաններ և դրույթներ» ենթաբաժնում, հրապարակված **«Անձնական և այլ տվյալների մշակման, տեղեկատվության հավաքագրման, օգտագործման և փոխանցման, ինչպես նաև «ԱԶՐԱ ՔՐԵԴԻԹ ՌԵՓՈՐԹԻՆԳ» ՓԲԸ-ից և իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններից, կազմակերպություններից հարցումներ կատարելու վերաբերյալ»** վերտառությամբ հրապարակային համաձայնության տեքստին, որի հիմքով Բանկը Համակարգով Հաճախորդին ծառայություններ մատուցելիս իրավասու կլինի մշակելու, այդ թվում՝ հավաքագրելու, օգտագործելու, փոխանցելու Հաճախորդի վերաբերյալ անձնական և այլ տվյալներ, ինչպես նաև սահմանված դեպքերում ու կարգով վերջինի վերաբերյալ տեղեկությունները տրամադրելու երրորդ անձանց:

57. Հաճախորդը գիտակցում և ընդունում է, որ Բանկի հետ հաստատված իրավահարաբերությունների ընթացքում իր կողմից տրամադրված հեռախոսահամարը Հաճախորդի՝ Բանկում գրանցված անձնական տվյալներից ենթակա է հեռացման հետևյալ դեպքերում.

1) եթե երրորդ անձը Հաճախորդի՝ Բանկում գրանցված հեռախոսահամարից Բանկի պաշտոնական հեռախոսահամարին զանգահարելու միջոցով տեղեկացրել է, որ տվյալ հեռախոսահամարը իրեն է պատկանում, կամ

2) եթե երրորդ անձը Բանկի պաշտոնական էլեկտրոնային հասցեների, մասնաճյուղերի և/կամ Հեռախոսազանգերի Կենտրոնի միջոցով Բանկ է ներկայացրել Բջջային կապի օպերատորի կողմից տրված տեղեկանք՝ ի հավաստում, որ տվյալ համարը պատկանում է իրեն:

58. Սույն կանոնների 56-րդ կետում նշված հիմքերն ի հայտ գալու մասին Բանկից տեղեկանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում Հաճախորդը պարտավորվում է մոտենալ Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ Բանկում գրանցված էլեկտրոնային փոստի և/կամ Բանկ-հաճախորդ համակարգի միջոցով ներկայացնել դիմում հեռախոսահամարի փոփոխություն կատարելու նպատակով, իսկ մինչ փոփոխություն կատարելը, Բանկը դադարեցնում է տվյալ հեռախոսահամարին տեղեկատվության տրամադրումը: Բանկի կողմից 56-րդ կետում նշված հիմքերի մասին տեղեկացնելու համար Հաճախորդի հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում նույն տեղեկատվությունը ուղարկվում է Հաճախորդի գրանցված էլեկտրոնային փոստի հասցեին:

59. Եթե 56-րդ կետում նշված հիմքերն ի հայտ գալուց հետո 1 (մեկ) ամսվա ընթացքում Բանկի աշխատակցին չի հաջողվում կապ հաստատել Հաճախորդի հետ և/կամ Հաճախորդի կողմից չի իրականացվում տվյալների թարմացում, ապա վերջինիս հաշիվները ենթակա են արգելափակման: Հաճախորդի կողմից տվյալների թարմացում իրականացնելու դեպքում հաշիվներ ապաարգելափակվում են:

60. Սույն կանոններով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «Այդի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:

Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է